

կերտութեան կողմէ: Յորելեարին նուիրուեցաւ իր իւզաներկ զիմանկալը՝ աշխատութիւն Տ. Յ. Աճէմեանի նախկին Աշկ. Մ. Ռ. վարժարանի և այժմ յաճախող քաղցիւն Արուեստից վարժարանը: Նոյնպէս և նորօրէն զըջագրուած և մանրանկարուած աշխատութիւն մը՝ Հ. Գ. Ոսկեանի:

Հուսկ վարժարանին Տեսուչ Վ. Հ. Թաղէտոս Վ. Թովմանան շնորհակալութեան ուղերձով մը առ Երաժշտագէտ Յորելեարն իր երեսներէն զամենայ ուսուցչական գործունէութեան համար վարժարանին մէջ, նուիրեց ոսկի մետալ մը մէկ կողմ մը փորագրուած վարժարանին զինանշանը, իսկ միւս կողմը լատիներէն լեզուով ձօնը առ Արեւիկանոս Բոնձիլագուա:

Ա. Բոնձիլագուա, ծանօթ վենետիկեան շրջանակին իր երաժշտական գործերով, որոնցմէ ոմանք ժողովրդականացած են արդէն, կրնայ ըստիլ թէ աւելի անժողաց պիտի մնայ մեր մէջ, որովհետեւ իր երգերէն շատեր և ամենայաջողներն գուցէ, իրենց նիւթ ունին հայ կեանքը: Իր հայ աշակերտներու հետ շփման մէջ զգացած է և ազդուած այն տարուեր կեանքէն՝ որով տարուեր է մեր ազգը և իր քնարին թիւերն ալ նոյնպէս ողբերգած: Թողունք մանր կտորներն ու քայլերգները զոր շարադրած է վարժարանին աշակերտութեան համար և յիշենք միւսներէն *Dolori sacrum per l'Armenia. I vesperi armeni* յուզող և շատ հզօր երաժշտութիւն մը. *Padre Alishan* պատարուն և շքեղ կտոր մը, *Sulle rive di Arax* մեղամազձ և մեղմ նուագածուութիւն մը:

Այս բոլորը արդիւնք են հայ արդի կենսերին, այս պատճառաւ տառապանքներու արձագանգն են եղած: Եւ ճառախօսներէն մին իր վերջաբանին մէջ կը մաղթէր պատկանելի Երաժշտագէտին որ փութով կարենար երգել նաև յաղթական Հայաստանի մը փառքը: Այս բարեմաղթութիւնը կ'ուղղենք Յարգելի Յորելեարին նաև այս էջերէն: ԽՅԲ.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍԿԱՔԱՂ

Քուէ Է Դեբեդու-Եւանի Դաւաւս Աւարանի

Ա. — Ղուկ. Ա. 25.

«Չի՛նէ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ բառնալ զնախաւինս իմ ի մարդկանէ» համարին ընդգրծեալ բացատրութիւնը առաջին իսկ ակնարկով խօսքին իմաստը կը մթնցնէ. և ստուգել քնազրին մէջ բոլորովին տարբեր է համապատասխան տեղը. *Յու օւտա μοι πεποίηκεν ο κύριος* են—Չի այսպէս արար ընդ իս Տէր, ինչպէս լատին և այլ թարգմանութիւններ ալ ունին յայտնապէս. *quia sic fecit mihi Dominus* = *C'est ainsi que...* են:

Եւ յիշատի Բիշ իմաստ ունի ըսել «Բիշ ըրաւ ինձի Աստուած որ մարգոց առջև նախատինքէ մը փրկէ»: Մինչդեռ լաւ կը հասկցուի եթէ ըսենք. «Այս բանն ըրաւ ինձի Աստուած որպէս զի նախատինքէ մը փրկէ զիս»:

Հաւանօրէն մեր թարգմանութեան մէջ *Յու Է Դի* հետ շփոթուած է:

Բ. — Ղուկ. Ա. 28.

«Ուրախ լիբ, բերկրեալ, Տէր ընդ քեզ»ը չի համաձայնիր յոյն քնազրին և այլ թարգմանութեանց: Բնագիրը՝ *χαίρε κεχαριστομένη* (*χαριτόω* արմատէն և ոչ *χαίρω*) կը նշանակէ՝ Ուրախ լիբ կամ Ողջ լիբ շնորհալից (*ի* շնորհօք), ինչպէս ունի Վուկաթա՝ *Ave, gratia plena*, նոյնպէս Ասորի, Ղպտի են: Մեր թարգմանիչներն անշուշտ երկու տարբեր բայերը *χαίρε* և *κεχαριστομένη* նոյն արմատէն համարած են, այսինքն *χαίρω*է որ ուրախանամ, խրախանամ կը նշանակէ, մինչ *κεχαριστομένη* կը ծագի *χαριτόω* էն, որուն արմատն է *χαρίζω* = շնորհք, ուստի հոս շնորհօք լի:

Միւս կողմանէ ուրախ լիբ և բերկրեալ իբրև նոյնանշան արդէն մեր թարգմանութեան սխալը կը ցուցնեն:

Սակայն հետաքրքրական է որ հայ թարգմանութեան կը ձայնակցի եթովպականը մի միայն. ան ալ երկրորդ բառը կը թարգմանէ րեկրեալ՝ փոխանակ յի շեօթօթի, ինչպէս կը յիշէ Zorell՝ ալ ակնարկելով թէ՛ հայն և եթովպացին րեկրեալ թարգմաններ են, համարելով որ չարսեւն չարս արմատէն առաջ կու գայ:

Զարմանալի զուգադիպութիւն՝ որ սակայն անկասկած՝ կախում մը կը նշանակէ:

Գ. — Ղուկ. Գ. 23.

«Էւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից սկսեալ, որոց որպէս կարծէր որդի Յովսեփայ»: Հոս՝ որոց յարաբերական է որ շարադրութիւնը կը մթնցնէ, առանց հասկնելու թէ զով կը յարաբերէ:

Պարզապէս շփոթութիւն մ'է՛ օն == որոց դերանուան և օն == զուով՝ զոմ (եմ) բային ընդունելութեան հետ: Ուրեմն սրբագրելով բնագրին համեմատ՝ կ'ունենանք. «Էւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից՝ զուով՝ որպէս կարծէր՝ որդի Յովսեփայ»:

Գ. — Ղուկ. Զ. 21.

«Երանի աղքատացդ հոգով». բնագիրն և թարգմանութիւնները հոգով չունին հոս, սխալմամբ աւելցուած է Մատթ. Ե. 3էն՝ ուր միայն գոյութիւն ունի հոգւովը:

Նման յաւելումներ կամ փոխառութիւններ մէկէն միւս Աւետարանին մէջ շատ ու շատ են:

Ե. — Ղուկ. Բ. 26, 37. «Գերգեսսն» (Մտթ. Բ. 28. Մկ. Ե. 1).

Աւետարանի այս անունը իր այս ձևին մէջ չի համապատասխաներ ոչ յոյն բնագրի սովորական ընթերցման և ոչ միւս թարգմանութիւններուն:

Նախ՝ լատին ձևը ամենուրեք Gerasenorum == Gerasa == Գերասացոց է. իսկ յոյն քնագիրը կրկին ձև ունի՝ մին Դերասցոն == Գերասացոց, Դերասս == Գերասա՝ համեմատ վուկաթայի, իսկ միւսը հայ թարգմանութեան բոլորովին անծանօթ՝ Դաժարցոն == Գաղարացոց (Մտթ. Բ. 28):

Միւր Գերգեսացի ձևը յայտնի է որ ծագած է, ինչպէս կը նշանակէ Zorell իր յիշեալ բառգրքին մէջ՝ Որոգինէսէն՝ որ ուղիղ չհամարելով մէջ Դերասցոն == Գերասացոց ձևը և ոչ Դաժարցոն == Գաղարացոց՝ ուզած է կարդալ Դերցեսցոն == Գերգեսացոց՝ իրը Դերցեսէն ծագած. Սակայն Գերգեսա անունը քաղաքի կամ գիւղի ամենին հետք կամ յիշատակ չունինք, Որոգինէսէն զատ միայն Ասորական թարգմանութեան մէջ կայ այդ ձևը, և անշուշտ ասոնցմէ է մերն ալ:

Բայց այս անուան ընդհանրացած ձևն է Դերասս == Gerasa == Գերասա, որովհետեւ Յովսէփ Ֆլաւիոսի քով Գերասացի կը կոչուին Գաղարադու մէջ՝ Յարոկ գետին մօտ եղած քաղաքին բնակիչները. թէև այժմ անոր տեղը մեզի անծանօթ է, սակայն բմանք կը համարին թէ նոյն ըլլայ աւերակ Gersaի կամ Kursiի հետ, իսկ W. A. Neumann այդ տեղերը յատկապէս քննելով կը կարծէ որ Wadi Semaki և Wadi N'qebti միջև եւ զած Qurn Dscheradi բլուրին անունը հետք մ'ըլլայ Geradi կոչուած տեղոյ մը՝ ուսկից ծագած ըլլայ Գիւղ Գերադեանց == չճրս տօն Դերաձւոն, և ընդօրինակողները՝ անգիտանալով այդ անունը՝ ծանօթ ձևեր փոխանակած ըլլան անոր, այսինքն Դոն Դաժարցոն == Գաղարացոց կամ Դերասցոն == Գերասացոց և կամ երբորդ ձև մը՝ Դերցեսցոն == Գերգեսացոց:

(Շարայարիւի)

Հ. ԵՂԻՍ ՓԵՏԻՍԵԱՆ

1. Novi Testamenti lexicon graecum Parisi. 1911. էջ 619.

2. էջ 107.

B. ինչպէս Nestle որ Gergesa = Գերգեսա ձևը կը կիրարկէ, համարելով նոյն Kersaի հետ իր Աւետարանական հրատ. ցարտեսներուն մէջ.